


ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Պոռլիարիոյ համար
 սարեկան 12 ֆր.
 վեցամսեայ 7 " "
 Արտասահմանի
 համար սարեկան 15 " "
 վեցամսեայ 8 " "
 Ամերիկայի համար
 սարեկան 3 ֆր.
 վեցամսեայ 1.50 "

Մացուցման տողը ա-
 ռաջին երեսին համար
 40 սանթիմ իսկ վերջին
 երեսին համար 20 սան-
 քիմ է. երեքին անշի
 անգեմներու համար
 20 0/0 զեղջ կրուայ :

Վառնայի համար 4 ո
 ֆե 10 սանթիմ է



ՆՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ԲՈՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԻՔՇԱՐԻ ԵՒ ԾԱՐԱԹ ՕՐԵՐԸ

ОГОВОРНИКЪ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նամակ եւ դրամ
 դրկի խմբագրութեան
 հասցեին

Редакция на вѣстникъ
 „Шаржумъ“
 Варна

Redaction du journal
 „Charjoum“
 (Bulgarie) Varna

—
 Պոռլիարիոյ համար
 ձեռք 15 ՍԱՆԹԻՄ
 Արտասահմանի համար
 ձեռք 20 ՍԱՆԹԻՄ

Գրութեան և չեն
 տրուիր

ՉՈՐԻՔՇԱՐԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵ՛՛ԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆԻՒԿ ՍՃԱՐԷ

ՈՒՍԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ Տ Ա Գ Ն Ա Պ Ը

ՕՏԷՍԱՅԻ ԴԷՊՔԵՐԸ—ԿՈՉ ՄԸ
 —()—

Վերջապէս ազնունքու է՛ն անե-
 ին ծայր տուա ուսական անխիսան
 ու պիտօքրագ կառավարութեան
 հանդէպ...

Ա՛նք որ ցարիզի յայտն ու զօ-
 րակիզ վէճը ճանչցուած էին, անոք
 որ ցարիզի պատուարը կը հանդի-
 սանային երկար տարիներէ ի վեր,
 անոք եւս գլուխ բարձրացուցած են
 ապստամբական զօրը ծածանելով...

Յեղափոխական հզօր ճիգին բարե-
 րար արդիւնքները այսօր սկսած են
 հասունանալ, անիլ, տարածուիլ ամեն
 խուռ ու միտն անկեղծ...

Չինուորներու թիթեւ եւ աննշան
 խլրտուներէն վերջ՝ այսօր ուսական
 նաւաստիներն են. որ անբացատրելի
 ու անբարեկարգ խիզախութեամբ մը
 պատերազմ կը հռչակեն կառավարու-
 թեան դէմ, —ու այս, տարօրինակ է
 ըսել, իրենց մեծաւորներուն, իրենց
 օֆիսէրներուն թիւադրանքով...

Օտէսայի օֆիսեալ-ֆոթէմըինս զրա
 հակիր նաւուն տուած ապստամբու-
 թեան յայտարար նշանն է այդ:

Յունիս 21-28էն ի վեր, իրենց շո-
 գենալի գլուխը յեղափոխական կար
 մի զօր մը բարձրացուցած, ամբողջ
 քաղաքը հուրի եւ ծուխի են երթար-
 կած: Կրկիզուներ, սպանուածներ,
 վերաններ...

Մինչեւ յունիս 29-30 բովանդակ
 քաղաքը իրենց արամաղութեան
 փակ եղած է նաւաստիներու ծովային
 կռուին արձագանգ տուած է ժողո-
 վաւորը ներքէն...

Կօզակներու եւ հեռեակ գունդեր
 քաղաքին շորս կողմը ինկած՝ սկսած
 են լուրջ ընդհարումներ ժողովրդին
 դէմ: «Մտովարները» հանդարտեց-
 նելու նպատակով՝ կանչուած է Սե-
 վազօպօլի նաւատորմը, որուն գործը
 պիտի ըլլար՝ զինագուլ ընել «ֆենազ
 Բօթէմըինս» հակառակ պարագային
 կրակելու եւ ընկղմելու սպանայի-
 քով...

Ատոր նախորդ օրը՝ նաւագները,
 իրենց մէկ սպանուած ընկերով թաղ-
 ման հանդէպը կատարելէ առաջ, շարք
 մը պայմաններ գրած են քաղաքա-
 պետին, որ է—իրենց նաւային նուա-
 զախուէրը եւ բոլոր նաւագները ել-
 լին ցամաք ու տանին իրենց ընկերով
 մարտի գերեզմանատուն, եթէ, կօ
 զակ կամ ուրիշ ուե է կարգի գինւոր

փորձէ արգելք հանդիսանալ ճանա-
 պարհին՝ պատրաստ են ամբողջ քա-
 ղաքը անխնայ կրակել: Պայման-
 ները ընդունուած են. կօզակներով
 վժժացող քաղաքը հետքերնին իսկ կը
 կորսնցնէ, որովհետեւ համարձակու-
 թիւն ունեցած չեն. եւ մարմինը
 թաղուած է մեծ չքով ու հարիւրա-
 ւոր գրգռիչ ու ոգեւորիչ դամբանա-
 կաններ խօսուած:

Վերջին պահուն կըսուի թէ օֆրն-
 եազ ֆօթէմըինս անձնատուր եղած է.
 բայց, իր վարմունքը անհետեւեւ
 անցած չէ, նոյն դրութեան մէջ են
 այս րոպէիս Պայթիկի երկու կարեւոր
 նաւահանգիստները. —Լիպօ եւ Փրօսս
 դատ, ուր գործադուլ սկսած են նաև
 ուրիշ կարգ մը գործարաններու բան
 ւորներ...

Կացութիւնը անոնք է, ինչպէս
 ֆրանսական օրաթերթի մը Բեթերս-
 պուրկեան թղթակիցը կը գրէ, ուս
 բարձրաստիճան պաշտօնեայ մը, նոյն
 իսկ—թղթակցին—ներկայութեան կը
 գոչէ. —Այս սարսափելի բան է Յու-
 շիմայի պարտութիւնը ասոր մօտ ոչ-
 ինչ պէտք է համարել: Ի՛նչ սա այն
 նաւաստիներն են, որ հեղութեան և
 հնազանդութեան է՛ն օրինակելի ա-
 պացոյցները տուած են, որոնց վի-
 ճակը բազմապատիկ նախանձելի էր
 քան զմաքաչին բանակները... եւս,
 Բայց ժամը մօտ է, Համբերութեան
 բաժակը լեցուած է...

Ստորեւ կը դնեմ կոչի մը մէկ մա-
 սը, որ Օտէսայի նաւային օֆիսէրնե-
 րէն ոմանք գրուած են իրենց պաշ-
 տօնակիցներուն մէջ. —

«Ընկերներ, Մեր երկրին արտա-
 ղին ու ներքին քաղաքական մէկ
 ծանր րոպէին մէջ կապրինք, Բացար-
 ձակ անհամեստութիւն է հեռուէն
 անգործ հանգիստեան կանգնիլ
 այն գէպքերուն, որոնք մեր ապիւ-
 սեղի կուսնան խելայեղ թափով եւ
 կը յուզեն ընկերական բոլոր խա-
 ւերը:

«Մեր հասարակութեան ամէն մէկ
 դասակարգի ներկայացուցիչներ տը-
 տա եւ կուսուողներ հայթայիտ ընդ-
 հանրութեան դատին, որ է՝ ազա-
 տագրում մեր հայրենիքին եւ մեր
 ժողովրդին՝ թրքա-թաթար միանե-
 ծանութեան ամեն կարգի շինօճիկ-
 ներէն, անբարոյական ու այլաբեր-
 ւած:

«Մեր առջեւ կը խաղացուի եղե-
 րերգութիւն մը՝ որ սիրտ կը ճմլէ եւ
 որ սկսեց 1904 փետր. 5 ի աղետալի
 դիշերէն ի վեր, անօգուտ եւ հեռաւոր
 Մայրաքոյն Արեւելքում (Տալի), ու
 այսօր ալ անձեռնմխելի:

«Ընկերներ! Անարժան ու ատելի

դեր մը կը խաղանք. մենք որ այն-
 քան նախանձախնդիր ենք մեր պա-
 տին իրբու պաշտօնեայ, մենք, որ
 կը գտնենք ինքզինքնիս հայրենիքի
 բանակին գլուխը որ մեզ վստահած
 է կայսրութեան հոգեբուն ամբողջու-
 թեան պահպանումը—ինչ ենք մենք
 իսկապէս: Մեզմէ ի՛նչ յառաջ բերած
 է այս կատարելագոյն անկարգակերպ
 կառավարութիւնը. եւ սա՛ է կառա-
 վաքութիւնը, որուն պարտաւոր ենք
 ծառայել. կառավարութիւն մը, որ
 իր երկչոտութեամբ եւ անհեռատեա-
 թեամբ մեզ կատորնացնէ եւ կը վար-
 կաբեկէ, ո՛չ միայն պաշտօնեաները,
 այլ եւ նոյն չափով անձնաւորու-
 թիւները, եւ որը, յուզումի է՛ն մեծ
 րոպէին, կորսնցնելով գլուխը՝ կը պա-
 հէ ինքզինքը մեր սուրիններուն եւ
 թնդաօթնեյուն ետեւ: Արժան է
 մեր օժանդակութեան ապրիի կա-
 ռավարութիւն մը—կառավարու-
 թիւն մը ստիկաններու, կառավա-
 րութիւն մը բունաբարութիւն, միանե-
 ծանութեան, մարդասպանութեան եւ
 կողոպուտի...

«Բաւական է, ընկերներ! Յիշեցէք
 թէ ինչպէս գէշ կը վարուին մեզ հետ
 ամեն ատեն:

«Ժանտարմի մը եւ կամ ստիկանա-
 կան անձի մը ու է լուրը բաւական
 է՝ վկայել թէ հոս ժողովուրդը յա-
 զազ չէ, որպէսզի մենք նետուինք
 փողոցները՝ սպանալու կառավարու-
 թեան դէմ զարացած ամբոխի վրայ
 եւ որը, ապա, իր ատելութիւնը
 զարձնէ մեր վրայ: Օրեր ամբողջ մեզ
 դէմքի տակ կը պահեն, ստիկանու-
 թեան խորամանկ ազդեցութեան շը-
 նորհւել, որ կը գործածէ մեզի իր քմա-
 հաճոյքին համմատ, որպէս թէ մենք
 իր ծառաններն ըլլայինք՝ զուրկ պատ-
 ուէ եւ արժանիքէ:

«Ընկերներ! Դիակ ինքնակալու-
 թեան կեանք պիտի չը կրնանք տալ
 եւ մեր բոլոր սուրինները ոչինչ են
 ժողովրդին բիրբուռն հանդէպ:

«Ձրսպասենք ուրեմն, ինքնակա-
 լութեան վախճանին, այլ անցնինք,
 քանի որ ժամանակն է. ճշարտու-
 թեան կողմը հայածուած ժողովրդին
 իրաւունքներուն կողմը: Ժողովրդին
 բարօրութիւնը մեր բարօրութիւնն է
 եւ ազգին երջանկութիւնը՝ մեր եր-
 ջանկութիւնը:

«Ձեռք տանք ուրեմն մեր կրտսեր
 եղբայրներուն՝ ընդհանրութեան թը-
 նամին ու հարստահարիչը հալածելու
 համար...»

«Ոտքի ելենք, ընկերներ, յա-
 ռաջ...»
 Ռուս բռնապետական ոչեփին

զարհուրելիութիւնը պատկերացնող
 ուրիշ ապացոյցի հարկ չկայ այլեւս:
 Այս կոչը ամեն ինչ կը բացատրէ:
 Կրող ստորագրութիւնն է՝ «խորհող
 պաշտօնեաներու կուսակցութիւն»:

Տարակուսի՛լ տակաւին ուս սողո-
 վորդի գիտակցութեան զարթնումի
 մասին...

Յաջորդական դէպքերը ինքնին
 պիտի խօսին ինքնին...
 Մ. ՅՈՒԱԿ

Հ Ա Ջ Ա Ր Է Ն Մ Է Կ Ը...

Փաստեր կան, որոնք աչքատու
 պայծառութեամբ մը կը ցոլաց-
 նեն անհատի մը, խմբակի մը
 կամ կուսակցութեան մը ներքին
 բարոյականը և նկարագրի ազ-
 նուութեան աստիճանաչափը:

Այդ փաստերը երբ բացասա-
 կան բնաւորութիւն մը կուսնեան
 և երբ մանաւանդ կարտայայտ-
 ւին ազգային սուրբ դատին
 պաշտպանութեան նուիրուած ըլ-
 լալու յաւակնութիւնը ունեցող
 անհատներու և իրենց սրամադ-
 րութեան տակ գտնուած թերթե-
 րուն մէջ, աւելի քան պերճա-
 խոս ապացոյցներ են այն բարո-
 յական սարսափելի անկումին,
 այն զգուշի և վրդովեցուցիչ
 ցածահոգութեան, որուն առաջ
 ամէն մի անհատ՝ որու սրտին
 մէջ գեւ մարդկայնական զգա-
 ցումի ամենավերջին հիւլէն
 չէ պղծուած թթու, մար-
 դակեր կուսակցամոլութեամբ:
 պիտի ընդվզի. զայրանայ և բո-
 ղոքէ...

Այն պահուն՝ երբ Պալքանե-
 րու հեռաւոր մէկ հովտին խոր-
 հրդաւոր ստուերներով փաթ-
 թուած Դաշնակցութեան հայրը,
 ազնիւ և մեծ հայրենասէրը,
 մեր Բրիտանափորը իր յաւիտե-
 նական վաղահաս քունը կը քը-
 նանար. այն պահուն՝ երբ հայ
 և Մակեդոն, արիւնակից և օտար
 միահամուռ վշտով համակուած
 կը շրջապատէին փոս մը, որուն
 մէջ հայ ազատագրութեան պայ-
 ծառ դէմքերէն մէկը կը դժգու-
 նէր, այն պահուն՝ երբ հեռա-

գիրները աշխարհի չորս ծայրերը ինչպէս նաեւ անշուշտ Ամերիկա՝ այդ տխուր անակնկալի սեւ լուրը կը սլացնէին, այդ պահուն Պօսթօնի մէջ հրատարակուող «Յայն Հայրենեաց» անուն թերթի մարտ 22ի թւին մէջ (Քրիստոսափորի մահէն 18 օր յետոյ հին տոմարով, իսկ 5 օր նոր տոմարով) «Խօսնակ» կեղծ անուն անակ զգուցիլ և անհամ զաւելտական՝ գրածք մը լոյս կը տեսնէր, որուն մէջ երեք տեղ «Թօփալ Քրիստոսափոր» բառերը ապուշ յղացումի մը անի մաստ տողերուն մէջ տեղ կերեւային, հայհոյելով մեռածի մը անհետացածի մը յիշատակին...

Չեմ գիտեր թէ հօթէնթօթները ինչպէս կը վերաբերվին մեռածի մը յիշատակին հետ՝ եթէ նոյն իսկ այդ մեռածի իրենց ամենափոքրիմ թշնամին ըլլար՝ բայց պատմական շատ ու շատ փաստերով կրնանք հետեւցնել թէ ապահովաբար այդ վայրենի համարումները աւելի ազնիւ, աւելի վեհանձն և բարեհոգի են մեռածի յիշատակին հանդէպ քան ամերիկեան խրմբակին տխուր անձնաւորութիւնները:

Ինքնըստինքեան նոյն իսկ կենդանի մարդու մը մարմնական պակասին վրայ ու է վերաբերական ակնարկութիւն ոչ մի ազնիւ հոգիի և վեհանձն նրկարագրի գործ չէ. իսկ նախատել այդքան ցած կերպով, այդքան ստորնաբար ոչ թէ յեղափոխականի մը, զաշնակցականի մը կամ հայրէնասէրի մը, այլ

մարդու մը, լոկ մեռած մարդու մը յիշատակը, այդ անբարենի տարբեր որակելու համար ես գոնէ նոյն իսկ օտար բառարաններու մէջ ոչ մէկ բառ կը գրանամ, որ կարողանար ազնիւ և անկեղծ մարդու մը զգացած բովանդակ զգանքը, ամբողջ ներքին անդամադրելի, յորդող ընդ վզու մը բացատրելու համար...

Չեր մտտող գրիչներուն տակ ոչ մի սրբութիւն մարութ չը մնայ, բայց շնորհ, գոնէ մեռածներու յիշատակը գիտցէք յարգել, գոնէ հանգիստ ձգեցէք զանոնք իրենց յաւիտենական քունը խաղաղօրէն քնանալու...

Հրանտ

Բարիկ

ՆԱՄԱԿԱՏՈՒԹ

ՈՍԿԵԶԱՆՔԻ ՌՈՒՍԱԶՆՈՅ ՆՈՐ ԳՈՐԾԻՉԻՆ

Ի՞՞՞տ երեք ամիս տաջ Սօֆիայում աչրող երկու հայաստանցիներին անունով, բայց ուստահայ բարբառով գրված «Նարժում»ը մերժող կարտ պօստալներ ընդունեցինք: Այդ կարտերը պահեցինք նրանց ինտէլէքտուէլ և իրական հեղինակին գտնելու համար, որը ուրիշի անունով «Նարժում»ը ետ ուղարկելով իր երեսխայկան դժգոհութեան գոհացում էր տալիս: Այդ կարտերից մէկի գիրը աշխատել էիք կեղծել, որպէսզի հեղինակները տարբեր երևնան, այսինքն կեղծարարութիւն էիք արել:

Ա. ԱՄՆԻՏԵԱՏՐՈՎ

ՎԻԿՏՈՐԻԱ ՊԱՎԼՈՎՆԱ

(Տօնախմբութիւն)

Գրագէտի յիշողութիւններից, Ամրան արկածներ քաւական սարսիղակի հաւատարմութեան մէջ)

(Խարգմ. ուսուցիչից)

42

Ը.

(Շար. նախորդ քիւիէն)

Ես դժգոհութեամբ նախագուշակում էի, թէ մինչեւ որ առաջին տըպաւորութիւնը չանցնի, յիմար առաւօտեան յիշողութիւնը տխուր ուրվականի պէս պէտք է կանգնի իմ և Վիկտորիայի միջեւ ամեն մի խօսակցութեան միջոցին. ու երկուսիս համար էլ անհաճոյ և ձանձրալի պէտք է լինի:

Վիկտորիան ռպտվով իմ գանդաղ կոտուեթիւնից, շարունակեց. — Ես հասկանում եմ թէ այսօրվան դէպքը, որ տեղի ունեցաւ հաճոյք չի պատճառի որ ինձ մօտ հիւր մնաք:

Եւ ահա երեկ տաւցանք Բոկեհանքից, անձնապէս Վարդօյին ուղղված ձեր նամակը, որը այլևս երկիր մտնողի, այն էլ առաջին անգամ թերեւս, հովերն է կրում: Այդ նամակից հասկացանք որ Սօֆիայի կարտերի հեղինակն էլ դուք էք. ու Բուլգարիայից հեռանալուց յետոյ է որ ազատ էք համարել ձեզ ձեր կարծիքները Վարդօյին ուղղելու թերեւս այն էլ կեղծ ստորագրութեամբ, որովհետեւ ձեր ստորագրութիւնը անունը մեզ յայտնի չէ. երանի թէ տեղական մարմին վաւերացնել սայիք ձեր գրութիւնը:

Ինչպէս երեւում է «Երթաւարդ Հայաստան»ի յիշած ուստահայ տղերք որ Պիլիպէյում Վարդօյի հասցէին բաներ է խօսել նոյնպէս դուք էք. Հասկացանք հիմա ձեր տեղեկութիւնների և տրամադրութիւնների ապրիւրը... «Կաթսան իրեն յարմար խօսի պէտք է գտնէ»:

Ասպետականութիւնը պահանջում էր որ դուք Բուլգարիայում գտնված միջոցին ձեր Ոսկեհանքից գրելիք նամակը գրելիք, հասցէ տալով՝ պատասխան ընդունելու համար:

Բայց կարտեր կեղծողից ինչ ստպետալ անութիւն... Մտխուր. ձեր նամակը այժմ մինք ուղարկեցինք Արեւմտեան Բիւրօյին, պահանջելով որ այդ նամակը հրատարակվի «Իրօջակում», հակառակ պարագային մենք պէտք է հրատարակենք «Նարժում»ում, ձեր ամեն մի տողին պատասխանելու պայման

նում, նրա կողքին, գրուիք կախ, մէջքը կորացրած նստել էր և մէկը սայլում, սպիտակ կատրուզով եւ մոխրագոյն զգեստով:

— Այո, Վանիչկան է, բացականչեցի ես, ինչի վանիչկին հետ տարաւ:

Այդ հարցով գրուիս դարձնելով Վիկտորիայի կողմը, ես նրան իր տեղում, սեղանի մօտ չը գտայ. նա լուսթեամբ, ստեղծի պէս հեռացել էր:

Նայեցի Բուրուեի ետեւից, մինչեւ որ սայլակի ետեւում երեւացող փոշու ամպը աներեւութացաւ. ես էլ ներս քաշվեցի:

է.

Արինան նստել էր պատշգամբի ստորձանների վրա, ու խոհանոցի դանակով մաքրում էր մի մեծ թողկերը մօտեցայ նա առանց իր գրադմունքը թողնելու, գրուիք բարձրացրեց ինձ վրա այնպիսի մի թափանցող նայածք ձգեց, որ ես կտրկրկեցի ղէմքը մոտ էլ կտրել, չըթունքներ սեղմված էին, այտուկները լարվել, ճակատի վրա երեւում էր հաստ կապոյտ երակը, իսկ սպիտակի տըւող յօնքերը դէպի քիթն էին ուղղվել: Մինչեւ օրս նրա մոխրագոյն աչքերում չէի նկատել դեղին կայծեր:

նով, Այս պատիւր անում ենք ձեզ, որովհետեւ երկրում էք գտնվում: Յուսով ենք որ շատ գոհ պէտք է մնաք ձեր Վարդօյի մասին կազմած կարծիքը հայ հասարակութեան առջեւ գրելու համար:

Չը մոռանաք այդ տեղի ընկերներին պատմել, որ դուք Բուլգարիայում քաւականացի էք միայն երկու «Նարժում», այն էլ ուրիշի տաւցած, մերժող կարտեր գրել մէկի գիրը կեղծելով, իսկ Վարդօյի մասին կարծիք յայտնելու հրատարակելու պահէլ էք թիւրքիայից կատարելու համար. մենք յուսով ենք որ այդ տեղի ընկերները կը պնտահատեն ձեր Բուլգարիոյ քաւագործութիւնը:

ՔՆՆԱԿԱՆ ԱԿՆԱԿ ՍԸ

Ամեն անգամ երբ խնդիր կը թական սպարէզին չուրջն է ժողովուրդի ձայնը սոսկալի պահանջկոտ պոթկուներէ երեւան կուգայ. ինչ որ քննադատելի կը թուի ոմանց, բայց ըստ իստակաւ արդար պահանջում մ'է եւ մանաւանդ մեզ նման ազգի մը համար, որ բացարձակօրէն ծարար է կրթութեան, առաւելապէս, եւ մեծ չափով պէտք ունի անոր. եւ ինչու մեղադրել համայնք մը, որ իր յառաջդիմաւոր ձգտումներուն մէջ միշտ աւելի բարձր—չըւենք ծայրայեղ—ստիճան առաջ կը կրթայ. եւ թէպէտեւ մեծ-խօս ու ինքնահասան ուսուցիչներու կողմէ գոհակի, անուս ու ուսիկ մարդիկ կընդունուին այս արդար պահանջկոտները սակայն յուրջ հայեցողութիւն մը կրնայ ոչ թէ բռնադատել այսպիսիները, այլ

այժմ նրանք ցատկոտում էին:

— Սոսկուց կուտացաք. ոչ աստիքով, այլ հաստ ձայնով հաջալով աւաց նա, ու այդ միջոցին շարժվեց նրա զօրեղ կուրծքը եւ քշած ձեռքերում գտնվող թողի կնճպները սկսեցին թռչել. շատ խնայցի բաներ լսեցիք. պատմելով մինչեւ վաղը վերջացնել չէք կարող:

— Ես ինչ անեմ, առարկեցի ես ոչ այնքան նրա խօսքերին որչափ նրա ձեւերին եւ նայածքին պատասխանելով. ինձ վրա ինչի էք շարանում:

— Ես ձեզ վրա չեմ շարանում, բարկացած եմ. դիտմամբ այստեղ դարան մտայ, ու սկսեցի այս մոտատանան մանրացնել թերեւս այդ մի քիչ հանգստացնէ: Վիկտորիային ո՞ր թողեցիք:

— Ես կարծում էի նա տուն է եկել — Չը տեսայ. այ յիմար, յիմարագոյն:

Ես ձեւացրի որ չեմ լսում եւ ուղղում էի հեռանալ, բայց երեւաց որ Արինայից ազատվելը դիւրին չէ երբ նա վճռել է յոստել, նա ամենայն պարզութեամբ հետեւեց ինձ, ներս մտաւ իմ սենեակը, ու երբ ես նըստեցի սեղանիս առջեւ եւ սկսեցի թղթերս թերթել, կեղծելով որ պէտք է գրազվիմ, նա առանց ուշադրութիւն դարձնելու իմ խորհրդաւոր ձե-

զրուագի նորիսկ . այո՛ , որովհետեւ
ա՛յ անցած է երբեմնի կոյր-զկուրայն
հետեւողութիւնը . եւ քնակա՛ն է այս .
քանի որ ժամանակի խթանը ազդու
եւ զօրեղ ներգործութիւն կրնէ հիմա .
քան երբեմն . եւ հետեւաբար այլա-
կերպ չէր կրնար ըլլար , ուստի իրա-
ւամբ արդիւնք կը փնտռէ արդի սե-
րունդը եւ յառաջդիմութիւն կը պո-
ռայ :

Ահաւասիկ գովելի մարմաջ մը .
Ճշգրիտ փորձառու թեւամբ՝ բազմա-
թիւ քաղաքներու մէջ գրեթէ միեւ-
նոյն բանը անսոյ մանրակրկիտ վրն-
նութիւնով : Ամեն տեղ եւ ամեն դա-
սակարգի մարդոց միշտ նոյն էար-
ցունմանն ուղղեցի . սիւնչպէս է ձեր
զպրոցը , յառաջդիմութիւն կա՛յ , գո՛ն
էք դաստուենէն եւայն . բայց
գծարխտաբար պատասխար միշտ
մխտական եղած է միշտ արգահա-
տելի :

Հարկ է հոս՝ սիրելի ընթերցողին
յիշեցնել թէ արացառութիւնը միշտ
վերապահութեամբ ընդունելի է :

Եւ արդէն ա՛նկէջ զատ , հաւատք
չընծայելով ուրիշներու խօսքին ,
թովմասական յամոտութեամբ , միշտ
փաղաքուչ եւ խրատու միջ վարմուն-
քով ներկայ . այ գտնւելեցո՞ք դաս-
խօսութիւններու եւ քննութիւններու
ու . եւ զբազէս՝ աղէկ մը հասկցանք
թէ բոլորովին արգարացի է ժողո-
վուրդի բողոքը , խնդիր չէ թէ լսող
չկայ այս արդար գանդատին . իրաւա-
ցի պահանջումներուն , ինչո՞ք ան-
մերթ ըլնու ու մեռնի , մերթ լարծ-
րաձայն , եւ միշտ յամբընթաց բայց
յուսալից գիտէ անվնասաբար չկասնչ
ընաւ եւ լսելի ընել իր ձայնը , իր
պահանջը որուն մէջ հայելիի նման
յստակ կը ցոլայ իր ապագան .
բարեկեցիկ կենցաղավար , լիքեան հիմն
ու խարխիւր վերջապէս յառաջդիմու-
թիւն , որ կ'եւանք լսել է :

Աւ անշուշտ այս տխուր իրողու-
թեան առջեւ քնական հարց մը կը
ծագի , թէ՛ ի՞նչ է պատճառը մեր զըպ-
րոցներու յետադիմութեան :

Եթէ մի առ մի ուզենք հետազոտել
պատճառները , շատ շատ են անոնք
եւ . մէ առ մէ մտի բոլոր էջերն իսկ
չեն լաւեր լինելու , միայն թէ հա-
կիրճ ու ամփոփ կերպով կրնանք փ-
րագրել մէկ բանի , ուսուցիչներու
անկարողութեան :

Փխտեմ որ այս բացատրութիւնը
ձանր պիտի ձնչէ շատ ականջներու եւ՝
ինքնահաւան ու պոռոտախօս ու հով-
րակ ու անկարող դաստառիկներու
սրտին ալ՝ գուցէ ձանր հարուած մը
թուի , բայց որո՞ւ հոգ . անոնք լաւ
գիտեն որ ժողովուրդն այ անկարող է
իրենց պէս . եւ շուարած՝ չեն կրնար
վճռել նոյնիսկ թէ որո՞նքն է յան-
ցանքը . իրենցը , թէ՛ զիրենք հոն
զենող մարմինին . որ մարմին չըլլալէ
զատ ամէն բան է . չեզոք ու կատեալ
իր անգոյ գոյութեամբ :

Հոս բուն տեղն է յիշեցնել որ
զպրոցի մը պիտե՞նք մեծ գեր կը կա-
տարէ . Այո՛ , եւ իրաւացի է այս .
պայմանաւ սակայն , որ այս պիտե-
ձին կարող ու գործուն մարդոց ձեռ-
քին մէջ ըլլայ հակառակ պարագա-
յին նպարդիւն կը լինի :

Արդէն քիչ թէ շատ բանէ հասկցող
հոգաբարձութիւն մը որ փոքրիկ
պիտե՞նք մեծ արդիւնք ցոյց կու-
տայ , ան իր գործունէութեան ապո-
ցոյցը կուտայ իսկ ընդհակառակը ,
երբ հոգաբարձութիւն մը կամ թա-
ղական-աղայութիւն մը այս աղէկ
պիտե՞նք հանդերձ սպասուածը ու
զգալի արդիւնք մը ցոյց չի տար այն
տեան իր անկարողութեան սեւաբանը
կը պարզէ . ահա հոս է ըսել ցաւայի
կէտը , որչափ կարեւոր նոյնչափ ո-
գործելի , եւ աւելի մեծ չափով ար-
գահատելի :

Ահա ճիշտ այս վերջին ուշագրաւ
կէտը պատճառ եղաւ մեր այս յոգ-
ուածին երբ Ալէքսանդրիա էրիք քա-
նի մը որ առաջ այն ըարգաւան հողին
վրայ , որ ամեն բան արդիւնարեր
կը կարծուի . եւ արդէն գրեթէ՛ է
բացի մեր ազգային Պողոսեան եկ-
սեռ վարժարանէն :

Քննութեանց արդիւնքը տխուր
երեւոյթ մը պարզեց առաջին օրին ,
առաջին ժամին իսկ :

Հոս ձրի գրպարտութիւն մը չէ . որ
կը նետենք Ալէքսանդրիոյ մեր արեւ-
նակից եղբայրներուն երեւին , այլ
ցաւայի կէտը ցոյց կուտայ վէրքը
մասնակի կրնենք ինչ որ ամեն
մարդու պարտքն է . եւ եթէ երբէք
վարկեան մը մտածենք , թէ ապար-
դիւն են այսպիսի շատ գրուածքներ .
բայց քաղցր է մեզ յուսալ , որ գոնէ՛
մենք մեր պարտքը կատարած կըլ-
լանք ստով . թէ՛ իրեւ ազգային ան-
հատ . եւ թէ՛ իրեւ մարդ :

Շատ մարդիկ յիսոյս հաւատք
կրնանք թէ Ալէքսանդրիոյ պէս ա
զատ միջնորդութիւն մը մէջ ազգային
գործերը եւս առաւել նախանձելի
դիրք մը ունին , զպրոցներն եւս ա-
ւելի կանոնաւոր եւ յառաջադէմ են ,
Բայց զժախտաբար եւ իցաւ մեր
սրտին , տխուր իրողութիւնը անգամ
մը եւս հրապույտ կեցնէ եւ կուգայ
չնչուել , թէ ի գրեւ են մեր յոյսեր .
եւ բոլորովին խուսափուկ :

Տարօրինակ երեւոյթ մը չէ՞ արգ-
եօք այս . երբ կայ պարարտ հող եւ
ցորեն , բայց պտղաբերութիւն չկայ ,
բան մը որ գործող ձեռքերու տկա-
րութիւնը կը մատնանչէ բացարձա-
կապէս եւ արդէն ուրիշ ոչ մի բանի
կարելի է վերագրել . երբ իրողու-
թիւնը բացայայտ է եւ քողամերկ ,
Ալէքսանդրիոյ Ազգ . համայնքը
շատ լաւ գիտէ այս եւ աղէկ այ ըմ-
բրանած է . եւ հիասթափ իր առաջին
գարթնութենէն , բունն ու կրքուտ գոր-
ծունէութեամբ սկսած է գործին ձեռ-
նամուխ ըլլալ վերջերս , սակայն ան-
խոհեմ ու ոչ-փորձառու ընթացքով
մը գործելուն համար , չէ կրցած ա-
մենադոյզն օգտորարութիւն մը յա-
ռաջ բերել եւ գոնէ փոքրիկ բարե-
փոխումներ մտցնել զպրոցի սէմէն
ներս . եւ որչափ ալ արդարացի իր
պահանջումին մէջ , որչափ ալ բողոքի՛
ընաւ չէ կրցած մաքառիլ եւ կործա-
տալ ամեն զժուարութեանց . եւ անա-

իր գարթութիւն քով իր ննջուած տե-
սած է իր առաջին ճիշին իսկ լու-
թիւն յաջորդած է եւ ասոր ալ բուն
պատճառը դարձեալ անկարող գոր-
ծունէութիւնն է . վերոյիշեալ նոյն
տղարութիւնը . Շատ դիւրաւ կարելի
է ըմբռնել գործին եղելութիւնը . եր-
բոր երեւակայինք թէ թատերաբեմին
վրայ երկու անկարող գերասաններ
իրարու խօսք չհասկնալով խառնա-
չփոխութիւն մը յառաջ կը բերեն
Բարեկրակա՞ն թէ հայկական :

Շատ գործեր որ ապարդիւն կը
մնան . յաճախ գործելու եղանակէն
կախում ունին . գործելակերպն է
դատապարտելի :

Ալէքսանդրիոյ մամուլը բազական
զբաղած է աւս խնջրով . բայց այն ալ
ի գուր . երբ խօսքին՝ հետ գործ չի
միանար :

Յոյս ունինք թէ Ալէքսանդրիոյ
ալ կրթական սեւակետով իր յետա-
դէմ վիճակէն կը դիմէ դէպ յառաջ
գիմութիւն , բայց ժամանակի կա-
րօտ է եւ թէպէտեւ հասած է ժամա-
նակը , բայց օգործող մարմինիս կա-
րօտ է :

Ինչո՞ւ համար այսպիսի ազատ մի-
ջավայրի մը կրթական ապարդէ՞նա-
խանձելի դիրք մը չունենայ . կերեւի
թէ մեր՝ գաղութի եղբայրները ան-
հոգ են ու անփոյթ . եւ ստոյգ է այս
որովհետեւ փորձով տեսածք թէ քըն-
նութեան ժամանակ շատ քիչ մտղներ
բարեկեցեցան զալ իրենց տղոց տա-
րեկան արդիւնքը տեսնել . եւ որչափ
փաստաբանութիւններ մէջ բերուին
այս կէտը պաշտպանելու համար , բո-
լորն ալ անհիմն են եւ անփաստ չըք-
մեղացում . մեղադրելի չէ՞ համայնք
մը , որ մանկապարտէզի հանդէսին
բւզմութեամբ հագուած-սքուուած ,
չըսած-չպարուած . պճնուած-զար-
գարուած կը դիմէ ետանդով լոկ հե-
տաքրքրութեան համար , մինչ անգին
աւելի կարեւորին , աւելի կարեւո-
րագոյնին հանդէպ անհոգ ու ան-
փոյթ կը գանուի :

ւերին եւ ակնարկներին . նոյնպէս
հանգստութեամբ , իր բողոքով միա
սին նստեց պատուանի գոգում ,
մերկ ուքերը կախելով կողքում գը-
ված աթոռի վրա :

— Ես վանիային հրամայեցի իւր-
ուանի հետ երթալ , ասեց Արիւն :

— Ան այդպէս դուք է՞ք կարգադ-
րել :

— Ես , թող գոնէ առաջին ջերմի
մէջ մենակ չը մնայ . մինչեւ որ քա-
մին զովացնէ . Տաքաղուիսութիւնով
ով գիտի ինչեր կարող է անել այդ
բուռակը : Ես վանիային խտուիւ
պատերիցի որ նրան մի վայրկեան
մեկնակ չը թողի , կոծոծի պէս փէ-
չէն կպչելով օտարներէ հետ մեն սե-
նակ խօսելու չը թողնի . ու եթէ օ-
րիորդի մասին յիշէ խօսքը իւրողէ ,
ուրիշ նիւթի անցնի :

— Դուք յոյս ունէ՞ք որ վանիան
կարող է այդ անել :

— Այդ Բուրուանի մէջ միայն երեք
օր պէտք է տեւէ , կանցնի , ես այդ
հերոսին բաւական ճանաչեցի . կո
կորդը մեծ է , բայց յատակը խո-
րունկ չէ , երեւում է :

— Բայց , դուք վանիային զազտ
նիքը կը յայտնէ , այդ մասին կը մը
տածեցի՞ք :

— Ինչի՞ . դրա մասին պէտք չի
ունենայ . առարկեց նա զարմացած ,
ու նրա դէմքը սկսեց կամաց-կամաց

իր կանոնաւոր ձեւը ստանալ

— Ինչի՞ այդպէս էք հաւատացած
հարցի ես :

— Որովհետեւ ասեցի ձեզ թէ վա-
նիային հրամայած է . հենց որ օ-
րիորդի մասին խօսք լինի , խօսքը
փոխել :

— Իսկ եթէ վանիան ինքը հետա-
քրքրվի եւ ձեր պատերիին չանսայ ,
Արիւնան դրականորէն չէր ուզում
հաւատալ իր ականջներին ու հարց-
րեց .

— Ո՞վ չի անսայ ինձ .

— Ձեր վանիան :

— Վանիան չի անսայ . բացակա-
նեց նա խիստ աչքերը լայն բանալով .
ու եւ կրկին ըմբռնեցի ու հաւատա-
ցի որ վանիան երբէք չի համարձակի
չանսայ :

— Թողնք որ , շարունակեց Արի-
ւան , մտածելով , եթէ Բուրուանը մի
բան էլ դուրս տայ , աւելի լաւ մե-
րինին քան թէ օտարին , վանիան
ձուկ է , ինչ որ նա գիտէ եւ հրա-
մայված է մարդի ջասել , իր բարձին
իսկ չի յայտնի :

Է՛ , ստոր են այր մարդիկ . բա-
ցականչեց նա դանտեր սպառնական
ձեւով շարժելով կայարան գնացող
ճամբի ուղղութեամբ . եւ այդ Բու-
րուանի երկու կտոր կանէի . իսկ այն
քաղցրիկին . . . այն ոչիւրն . . .

Արիւնան չը շարունակեց , կատա-

ղութիւնից չունչը կտրվեց , կըր-
կին արեւը զէմքը թռաւ ու կրկնկ-
ներովը սկսեց աթոռին գարկել . ես
լսում էի . նա շարունակեց .

— Հինգերորդ տարին է որ մեր յի
մարուհուն պնդում եմ որ վզին տալով
զուրս ալէ . մի իսյաստակու
թիւն գուրս կը հանէ՝ ոչ . անխզ
ճութիւն է . իսկ նրա խիղճը ու՞ր
մնաց . իսկ եթէ նրան հիմա առանց
կարգին պատժի թողնես՝ դեռ սրա
նից աւելի շար օյն կը հանէ . ես
գիտեմ . այս տեսակ գործերում մի-
այն առաջին երգն են երգում , է՛ .
սպասիր . ես ցոյց կը տամ զեզ ջը-
հուր Հերովդէս :

— Է՛ , ի՞նչ կարող էք անել դուք
Իվան Աֆանասիին . առարկեցի ես ,
նա ինձ պատասխանեց աւելի մեծ
չարութեամբ քան իմ հարցն էր ,
— Ինչպէս թէ ինչ կարող եմ անել ,
ինչ որ կուզեմ այն կանեմ այդ ստոր
արարածին :

— Ո՞ւր է նա , հարցրի ես .

— Սառցատունում նստած է . գոցել
եմ :

— Ի՞նչ :


— Որպէսզի չը փախչի . իսպառ-
բէն բացատրեց Արիւնան , թէ չէ կը
փախչի . թող մի քիչ զովանայ , մկ-
ների հետ բամբասանքով զբաղվի .
իսկ ես այդ ժամանակամիջոցում կը

մտածեմ թէ ինչպէս պէտք է վարվեմ
նրա հետ :

— Լսեցէք Արիւնա , գոչեցի ես ,
միթէ կարելի է հասուն մարդին , որ
ոչ խելագար , ոչ հարբած է եւ ոչ էլ
ձեզ ազգական , գոցել է կուզի մէջ .
չէ՞ որ դա բանութիւն է , ազատու-
թեան զրկում . ինչ իրաւունքով
դուք ո՞ճիր էք գործում . . .

— Է՛ . բարեկամա քարոզչական ե-
ղանակով , առարկեց Արիւնան , բոլո-
րովին ձերմակած , գողերին եւ քաջ
մարդկանց կապելով այդպիսի տե-
ղիւրւմ չէ որ զոցում են : Մենք ուր
իրաւունքը հասկանալը ուր , Մեր ի-
րաւունքը այս է . գողին բանեցիր . .
վզակութիւն տուր ինչքան կուզես :

(Շարունակելի)



Այս ալ այսպէս :

Բնաւ նպատակ չունինք ո եւ է մէկու մը սիրտ ցաւցնելու , այլ անկեղծ համակրանք մ'է , զոր այս գըրուածքով ցոյց կուտանք Ալէքսանդրիոյ համայնքին . համայնք մը , որուն հոգաբարձութիւնը ինք ալ գիտէ թէ տկար է եւ անկարող . որուն ուսուցչական մարմինը ինք ալ գիտէ թէ տկար է եւ անկարող . եւ զպրոցը պէտք ունի բարեփոխութեան եւ յառաջդիմութեան , նոյն փառաւոր պիւտեղով փառաւոր արդիւնք ցոյց տալու համար . կը յուսանք որ այս ալ կը տեսնենք օր մը .

Իսկ գալով այս տարուան արդիւնքին քանի մը խօսք պիտի գրեմ իբրեւ եղբակացութիւն քննութեանց : Եւ իբրեւ չնորք անհատ մը . պէտք չունիմ բնաւ ո եւ է անուն յիշելու , այլ բուն նիւթով պիտի զբաղիմ այս սինքն դասերով :

Հարկ է առաջ ըսել որ ամէն բանէ առաջ աշակերտ քննելու կերպը քննադատելի էր , ինչ որ դիտել տեսնուի կարող անհատներու , իր համաստ շրջանին մէջ : Մանկավարժութեան խօսքը չպիտի ընեմ բնաւ , որովհետեւ հոս ալ մեր հայրենի միւս բոլոր դպրոցներուն պէս , բառարաններու մէջ կը պահանջուի այս բառը , եւ արդէն մեղադրելու իրաւունքը չունինք . որովհետեւ մեր ո՞ր մէկ բանը կատարեալ ու կանոնաւոր է , որ այս ալ կատարեալ լինէր :

ԶՐԱՀԱՒՈՐ ՊՕՏԵՕՄԿԻՆ ԹՈՒՄԱՆԻՈՅ ԱՆՁՆԱՏՈՒՐ ԵՂԱՄ

Ռուսական յեղափոխական պատմութեան մէջ ըմբոստութեան փայլուն օրինակ տուող «Պոտեոմկին» զրահաւորը երկար ու բարակ Սեւ ծովի մէջ թափառելուց յետոյ , ինչպէս կերելի պաշարի պակասութեան պատճառով կըրկին ստիպուի վերադառնալ Ռուսական շրջանը եւ հոնստանցայում անձնատուր լինել Ռուսիէն կառավարութեան :

Ահա թէ այդ մասին ինչ են հեռագրում կոնստանցայից յուսնիս 25ին .

«Ռուսական իշխանութեանց պաշար տալու մերժումի վրա , այսօր բանակցութիւններ սկսվեցին կառավարութեան եւ «Իշխան Պոտեոմկին» զրահաւորի վարիչ յանձնախմբի հետ անձնատուր լինելու մասին :

Երկար ու բարակ բանակցութիւններէ յետոյ , զրահաւորի 20 հոգուց բաղկացած վարիչ յանձնախումբը համաձայնեց անձնատուր լինել :

«Ռուսիէն կառավարութիւնը յայտարարեց որ ռուս նաւատիրներին ընդունում է իբր յեղափոխականներ , ուրեմն եւ արտօնում է ազատօրէն ապրել Ռուսական շրջանում առանց ո եւ է վախ ու նենալու թէ կը յանձնվին ռուս կառավարութեան :

«Ճաշից մի ժամ յետոյ զրահաւորը մտաւ նաւահանգիստը ու ռուս նաւատիրները զրահաւորը

յանձնեցին ռուսիէն իշխանութեանց , իսկ ժամ 1 և կէսին զրահաւորի վրա գտնվող ռուսները սկսան իջնալ ցամաք եւ ազատ արձակվեցին : Ռուսիէն իշխանութիւնը զրահաւորից վերջըց ռուսական դրոշակը եւ բարձրացրեց ռուսականներ :

«Ռուսական 267 թիւ թօրփիւլանաւի նաւատիրները չ'իջան , յայտարարելով որ նրանք «Պոտեոմկինի բանութեան առկ ստիպված էին հետեւել նրան , ու թօրփիւլանաւր վերադարձաւ Սեւաստօպօլ :

Երբ Պոտեոմկինի նաւատիրներից մէկից հարցրել են ըմբոստութեան պատճառը , նա պատասխանել է . — սնունդի վատութիւնը եւ ընկերներից մէկի սպանվելն է եղել պատճառը խռովութեան , բայց ապտամբելու իրական պատճառն է միապետական ռեժիմը , որի առաջնական գործը արդէն սկսված է » :

ԵՐԿՈՒ ԽՕՄԲ Պ. ԽՍՐՈՒՆ

«Իրաւունք»ի նօ 4 ին մէջ յայտնեց պ. Խարօն իր մէկ վերջին ծայր յօդուես յօդուածով :

Որ աստիճանի արտուրդ եւ այդպէս ասած՝ օւտպիւր , եւ պ. յօդուածագիրը ինչի՞ աղքատ խոտապահանջ է միթէ Տ. Գուլյուստանի կառուցելիք շէնքը լաւ է ֆֆէկդ չի առջ եւ նա ինչու կանախէ այդ : Նա յօդուած գրելիս՝ բոլորովին նկատի չէ ունեցել գոնէ այն հանգամանքը թէ՛ եւ թէ՛ այն անձնաւորութիւնը չեւար այդ տեսակ մի բան անել , աղջիկները՝ որոնց վիճակած է ապագայ մայրեր դառնալ , պիտի շարունակէին էլ այդ խարխուլ , հակառողջ պահական վարժարանը յաճախել : Պարոնին այսքան ենք ստուծ , էլ թող այլ բան չի սպասէ :

Մոնասո

Ռուսուք 24 Յունիս 905

Հ Ր Ա Մ Ա Ն

ՌՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԵԱՆ Վ Ա Ր Չ Ո Ւ Թ Ե Ա Ն

«Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը սրանով յայտնում է բոլոր ոստիկաններին , ստրածներին երկին , ոստիկանապետներին , գաւառապետներին , ժանդարմներին եւ խուզարկու ոստիկանութեան անդամներին , որ այսուհետեւ նրանցից իւրաքանչիւրը անխնայ կերպով կոչնչացի , եթէ համարձակի հայերի ձեռքից զէնք խլել , խուզարկութիւններ կատարել կամ բանտարկել այդ նպատակով : Թող նրանցից իւրաքանչիւրը նախ քան այդ տեսակ գործ սկսելը յիշէ Բագրի նահանգապետական շիճէին , Գանձակի փոխ նահանգապետ Անդրէեվին , գաւառապետներ՝ Բոգոսլուսկուն , Եմբրիլին , Պալուկին , ոստիկանապետ Սախարո

վին , պրիստաւենը՝ Նաչչանսկուն , Չափախովին , Եուսկեվիչին , Տէր Սահակովին , ոստիկան Սերգօին , դաւապան Նէկօին եւ ուրիշ շատերին , որոնք Հ. Յ. Դաշնակցութեան վճռով մահուան պատժին են արժանացել : Փոխարքայի կողմից 25 ր. ընծայ » կամ յեղափոխական գնդակը — ահա թէ ինչ բան պէտք է ընտրել : Փոխարքան խոտաւում է այդ ձեռով փառաւորներ ընտանիքներն ապահովացնել : Գա թեթեւացնում է մեր գործը , որովհետեւ միայն անմեղ ընտանիքների անօգնական դրութիւնը կարող էր դողացնել յեղափոխականի ձեռքը : այժմ վերացրած է այդ արդէվըն էլ » :

Հ. Յ. ԴՆՆԱԿՅՈՒԹԵԱՆ Կ. Պ. Կ. ԿՕՄԻՏԷ ԴՊՐՅԱԿՈ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Յունիս 27ին Պոլսէն կը հեռագրեն թէ ինչպէս մակեդոնական այնպէս հայկական նահանգներու մէջ հարկերու հաւաքումը մեծ նեղութիւններ կը պատճառէ :

Հարկահաւաքները Համիտիէի քրդերու հետ կը պատին եւ դիւղացիներու երկրագործական գործիքները իսկ կը ծախեն . թէ եւ այդ օրէնքով արգիլուած է :

Կը ծախեն նաեւ անասունները , քիւրտերը հայերուն մեծ տոկոսներով գրամ կուտան եւ վերջը գիւղացիներուն հողերը կը գրաւեն : Քիւրտերը աղջիկներ եւ կնիկներ գրաւ կը վերցնեն իրենց պարտք ունեցողներէն կամ անոնց տուններուն մէջ կայրին . Մուշ , Սասուն եւ Վան ընդհանուր կոտորած է կը վախնան : 2ին . ուրախան տուրքն ալ 38 էն 50 զրուշի բարձրացած է : 10 տարի առաջ 27 զրուշ էր :

— Պոլսոյ մէջ ռուս Պարիսիա շոգենաւր , որ պտուղ կը տանէր Եփրատոս , պարտաւորուեցաւ Օտէսա վերադառնալ , որովհետեւ ծառայողները ըմբոստանալով ուզեր են քարիթանը սպանել :

Պիւլիքտէրէի մէջ ռուս ծովային սպայ մը , իր կնոյ հետ անցած միջոցին դիտողութիւն կընէ իրեն չը բարեւոյ ռուս նաւատիրին : Սա ձեռքը բռնած տեղերը երեսին կը նետէ եւ հայհոյական խօսքեր կընէ ցարին եւ սպանկուուն հասցէին :

— Սուլթանը ինքզինքը լաւ կըզայ եւ կըրցեր է իտալական եւ ռուսական դեպատներուն այցելութիւնը ընդունել :

Պոս օրերս Թիֆլիսում մի ոստիկան մի հայի զինաթափ անելիս վիրաւորուած է . փոխարքան այդ բանը տեսելով 25 ոտրի ընծայ է տալիս :

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Մոսկուայէն ԿՆԵՂԸ ԼՔԱՐԵՏՊ Թերթին կը հազորդեն հետեւեալը : Ռուս ծովային զօրքերու ըմբոստութեան օրինակին պիտի հետեւին նաեւ ցամաքային զօրքերու սպաները : Ամբողջ զօրքերուն կողմէ ուլթիմաթում պատրաստուած է , որով բարենորոգումներ կուզեն : Աւլթիմաթումը պիտի զրկուի , զօրաշարժը կատարուելէն յետոյ , 200,000 երիտասարդ պահեստի զօրքեր պիտի հաւաքուին եւ դրուին պահեստի սպաներու հրամանին տակ , թէ սպաները եւ թէ պահեստի զօրքերը յեղափոխութեան կը համակրին : Զօրքերը ըմբոստանալու նախաձեռնարկները թեթեւապարկ շրջանի սպաները են :

— Կովկասէն կը հազորդեն որ կառավարութիւնը բացարձակօրէն թոյլ կը վերաբերուի թաթարները զսպելու խնդրին մէջ : Հայերը բոլորովին յոյս չունին կառավարութեան աջակցութեան վրայ :

Ր Ո Ւ Մ Ա Ն Ի Ա

Յունիս 27 ին Քոնստանցայէն կը հեռագրեն հետեւեալը .

Այստեղ հասան ռուսական պատերազմական նաւեր 2 է սմա եւ 1 ինօ պ ե շորս ալ թօրփիւլանաւ : Ռուսիէն կառավարութեան կնեա զ Պ թ ե օ մ ք ի ն զրահաւորը ետ ընդունելու համար : «Պոթեոմքին»ի փախստական նաւատիրներէն 20 հոգիի շափ կըրկին վերադարձան իրենց նաւը . Ռուս նաւաբաժինը Քոնստանցա հասած միջոցին ռուսական «Նիլզաւետա» նաւէն դիմաւորուեցաւ թնդանօթային երեք ողջոյնով : Ռուս նաւերը պատասխանեցին :

Ռուսիէն իշխանութիւնները «Թեոթեոմքին»ի վրայ ծառայողները զրկեցին երկրին ներսերը , սիվիլ (պարզ) զգեստներով : Նաւատիրները իրենց զինուորական զգեստները չուկաներու մէջ կը ծախեն : «Թեոթեոմքին»ի քսապի մէջ գտնուած գրաւները ծառայողները բաժնէր են . մարդագլուխ 70 ֆրանք ինկեր է :

ՌՈՒՄ—ՃԱՐՆԱԿԱՆ

Պ Ա Տ Ե Ր Ա Չ Մ

Լինելիչ կը հեռագրէ որ ճարտարք յարձակուիլ սկսած են ռուսական զօրաբանակին աջ եւ ձախ թեւերուն վրայ :

— Սախալին կղզիին նահանգապետը Բեթերսպօրկ կը հեռագրէ որ ճարտարք արդէն սկսած են յարձակիլ Սախալինի վրայ : Երդէն Մերս 14 նաւ ճարտարական զինուոր հասեր են ճարտարական թօրփիւլանաւերը մօտիկցիք են Քորսաքովիին :